

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԼՆ ԿՈՂՄԵՑ

ՄԱՆԳԼԻՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ պր. Յովհաննէս Ստեփանեանցի ձեռքով ստացանք պր. Ղահրաման Էլչեանցից 100 ռուբլի արժողութեամբ չատակի տախտակներ, որ և անմիջապէս ւանձնեցին ուսումնարանին, և 5 ռուբլի դրամով ալ և ալ անձնարից: Առ ալժմ առձեռն ստացւած է ուրեմն 271 ռուբլի, որից 27 ռուբլի մնում է մեզ մօտ:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻՆ վերաբերեալ պր. Նշիշէ Մաղաթեանը միմասնաւոր նամակում, մեզ ուղղած, գրում է ի միջի ալոց նաև հետեւելը: «Լաւ է, լինել արդեօք, որ օտար բառերում և անուններում, օրինակ, ըստ կարելոյն ու գրէ՛ր: Օրինակ, չը գրել 'օն կիւտ, ալ 'ոն կիւտ, չը գրել կօնգօ, ալ կօնգօ (օն պանել բառի վերջին և սկզբին), չը գրել վիկտորիա, ալ վիկտորիա, չը գրել ֆիլոսոֆիա, ալ ֆիլոսոֆիա: Բայց ի հարկէ, օֆիցերը օֆիցեր չինելը ծիծաղելի է: Պէտք է ասած, որ մեր նախնիք էլ բառերի միջում շատ քիչ են գործածել օ—խօսք, ամօթ, ծանօթ, կարօտ, բօթ, մօտ, կրօն, ցօղ և այլն: Ես չիշեցի ինչ միտս եկաւ, բայց կարծեմ թույլ շատ չեն ալ տեսակ բառերը: Օտար բառերը մեր նախնիք միշտ ուով են գրել, մինչև անգամ սկզբին՝ Ուիմպոս (Уи́мпо), Որիդենէս (Ори́дент), Պարփիւր, Պեթրոս, Ռոմանոս, Մագեստոս և այլն: Միայն չունական մեծ օ (օմեգա)-ի տեղ գրել են ուլ, ինչպէս Մովսէս, Յակովբ, Յովսէփ, Յովհան, Հռովմ, Յովակիմ և այլն: (Ուրիշ բան է Պօղոս= Պաւլոս, Paulus):»

Պր. Մաղաթեանի առաջարկած խնդիրը մենք գտնում ենք թէ տեղիւն, թէ ժամանակին և թէ ձիշդ: Եւ իրօք, օտար անունների և նոր ընդունւած օտար բառերի նկատմամբ, մեզանում անխափր կերպով գործ են ածում և ու և օ, մինչդեռ կանոնի հետեւը գերադասելի է: Միևնույն գրածքում, կամ միևնույն հրատարակութեան՝ լրագրի, ամսագրի մէջ, մենք տեսնում ենք, որ հնուց մեզ աւանդւած բառերի և անունների մէջ

« և օ տառերի գործածութիւնը մի առանձնակ է, մինչդեռ նոր գործածող բառերի և անունների մէջ « և օ տառերի գործածութիւնը տարբեր է և իրար հակասող: Մէկը գրում է Տօմսօն, միւսը Տօմսոն, երրորդը Տօմսոն, չորրորդը Տօմսօն. մէկը գրում է էւօլիւցիա, միւսը էւլիւցիա և ալլա: Այսպիսի խառնաշփոթութիւն համարել մի հրատարակութեան մէջ չը պէտք է ոչ միայն ընդհանրապէս լեզուն և ուղղագրութիւնը կանոնաւորելու տեսակէտից, այլ և հրատարակիչների, սրբողողների և զրաշարների գործերը հնչւածներու միանգամայն դործնական տեսակէտից, որը բոլորովին արհամարելի տեսակէտ չէ:

Բայց կանոնաւորել դեռ չի նշանակում պալմանաւորել: Ձի կարելի պալմանաւորել, թէ արի՞ք ու ամենքս գրենք « կամ օ խոր օտար բառերի և անունների համար, որովհետև ուղղագրութեան, որպէս և լեզուի խնդիրներում, կանոնները ստեղծւում են ոչ թէ դրաւոր կամ բերանացի և կամ լռելեալն ընդունած պալմանների հիման վերաջ, այլ կանոնները պէտք է ստեղծեն խելացի հիմունքների վերաջ, թէ չէ գրողներից մէկի կամ միւսի անհամաձայնութիւնը կարող է խախտել արւեստական կերպով ստեղծւած ամեն մի կանոն և նա կ'ունենայ նորնքան հետևողներ, որքան պալմանաւորւած կանոնին հետևողները:

Օ և ո տառերի գործածութեան համար հիմունքներ տալիս է հայոց լեզուի ուղղագրութիւնը: Այստեղ մենք տեսնում ենք որ, բառերի միջում, « տառի գործածութիւնը անհամեմատ աւելի մեծ է քան օ տառի գործածութիւնը և ոչ միայն դուռ հակապան, այլ և օտար բառերի և անունների համար, բոլոր, մոլի, կփփ, սափփ, հալփ, կփրփ, խփեն, լփն, Գրիգոր և ալլա: Ինչ հիմունք կալ, ուրեմն, գրել էւօլիւցիա և ոչ էուլիւցիա, ֆօրտ և ոչ ֆորտ, Գլադստօն և ոչ Գլադստոն: Ուրեմն, բառերի միջերջում, օտար բառերի և անունների համար, հնգհանուր կանոնի համաձայն, պէտք է գրել « և ոչ օ:

Ուրեմն, օ տառի գործածութիւնը պէտք է մնալ ճարահատեալ դէպքերի համար, արտասանութեան շփոթութիւնների առաջն առնելու համար, բոլորովին ալիպէս, ինչպէս Վ տառի գործածութիւնը մենք վերապահում ենք միայն չալտնի գէպերի համար (բառերի սկզբում և « տառից չետոյ):

Իսկ որոնք են այդ ճարահատեալ դէպքերը:

1. Բառերի կամ անունների սկզբներում, երբ բացարձակ կերպով օ հնչիւնն է լսւում՝ Օթելլօ, Օւեն, օրդան, Օգիւստ:

2. Բառերի միջերգում արն ժամանակ, երբ նա լաջորդում է մի ձայնաւորի՝

Ֆեօդալ, Կլեօպատրիա, Լէօնիդ, և արն, որովհետև ևթէ աղ դէպքում « գրենք՝ ֆեօդալ, Կլեօպատրիա և արն, կարող ենք և պէտք է կարդանք՝ ֆեօդալ, Կլեօպատրիա և արն, ինչպէս որ Լէօն անունը, Լեօն գրած կարդացում է և գրւում Լեօն, Լեօնտը գառել է Լեօնտ կամ Դեօնդ, Այդ հիման վերալ է ահա, որ մենք պէտք է գրենք՝ ֆիդիօկրատ, Թեօրիա, ֆիդիօրոգիա և արն—Մի դէպք կա սակայն, որ պահանջում է առանձին բացատրութիւն։ «Մուրճ»-ի ուղղագրութեան համաձայն, ռուսաց ՕՅ հնչիւնը կարելի է գրել ու և կամ ու և, արտասանութեան համար, նույն է թէ գրւի Լերմոնով թէ Լերմոնու։ Մի դէպքում «-ի պատճառով պէտք է գրւի Վ, միւս դէպքում «-ի պատճառով պէտք է գրւի օ։ Բայց գրել Լերմոնու—դորա համար ոչ հիմք կա և ոչ անհրաժեշտութիւն, Նոյն դէպքն է և արսլաի անդերում՝ Գրովեր կամ Գրուեր, Դովրատ կամ Դուրատ, Ազով կամ Ազու։ «Մուրճ»-ի մէջ մենք թույ ենք տալիս ուղղագրութեան արն երկու ձևերն էլ, Բայց խոստովանում ենք, որ ու գրելը նախադասելի է, քանի որ հալոց լեզւում ՕՅ հնչիւնը միշտ ու է գրւել, առանց չփոխութիւնների տեղիք տալու։

Գանք արժ « և օ-ի պործածութեանը բառերի և անունների վերջում, որի համար պր. Մաղաթեանը առաջարկում է օ գրել։ Այդ առիթով մենք պէտք է նկատենք հետևեալը։ Բառերի վերջում օ գրելը—անհրաժեշտութիւն չի կարող համարւել, քանի որ Մկ, Կարօ, Յարօ, Բուալօ բոլորովին նոյն կերպ են արտասանւում, որպէս արն կերպ գրած ժամանակ՝

Մկօ, Կարօ, Յարօ, Բուալօ, Հները կը գրէին՝

Մկոյ, Կարոյ, Յարոյ, Բուալոյ, որպէս գրւում է՝

Ներքոյ, Լետոյ, Կոփածոյ, աստուածահաճոյ և արն։

Ուրեմն բառերի և անունների վերջում անպարման կերպով օ գրելը պարմանական բան է, թէ և չի կտրելի չը նկատել, որ օ վերջաւորութիւնը ոչ միայն հին ուղղագրութեան ձև է, այլ և մեզ թւում է թէ նա հնացել է, դառել է արխաիքական։ Այդ լակ պատճառով, բառերի վերջում, անելի չարմար ենք տեսնում օ գրել, որպէս և պր. Մաղաթեանն է առաջարկում։ Բնական է, որ, բառերի վերջում օ գրելով, օ տառը պէտք է պահպանենք նաև բարդ բառերում՝ էթնօ-լոգիա կամ էթնօլոգիա, ֆիդիթօմաթեմատիքական և արն։

Սակայն բառերի միջերգում ևս օ գրելը արն դէպքերում

պարտաւորիչ պէտք է լինի, երբ « գրելով շփոթութիւն՝ կարող է ծագել. օրինակ, պէտք է անպատճառ գրել թեօրիա և ոչ թեօրիա, որովհետև այս վերջինս կարող է կարգացել որպէս թէւորիա, ինչպէս Լէոն մենք կարդում ենք Լեւոն և ոչ որպէս Լեօն. նմանապէս պէտք է զրեւ Ֆիզիօլոգիա, թեօլոգիա և այլն՝ ֆիզիօլոգիա և թեւօլոգիա չը կարդալու համար:

Մենք կարծում ենք, որ « և օ տառերի գործածութեան կանոնները այս բացատրութիւններով հաստատու և խելացի հիմքի վերաջ որոշած պէտք է համարել. Այդ ուղղագրութեան կանոններին և կը հետեւենք մենք «Մուրճ»-ի մէջ, չալտենով միաժամանակ, որ այդ ուղղագրութիւնը ընդհանրապէս գործադրւած ենք տեսնում նաև տաճկա-հայ գրականութեան մէջ:

ԼՈՒՆՆՑ ՖՈՆ ՇՏԱՅՆ, որի 50-ամեայ դռնտորական շրջանների առիթով «Մուրճ»-ը իւր այս տարւալ № 5-ում մի ընդարձակ կենսագրական և գրական լուրաց տուց, սեպտեմբեր ամսին վախճանեց. Ամբողջ եւրոպական և ռուսական քաղաքական և հասարակական մամուլը այդ առիթով հանգուցեալի լիշատակին շատ թէ քիչ ընդարձակ լուրածներ նւիրեց. Լուսնց ֆոն Շտայն մեռաւ 75 ամեայ հասակում:

«ՄՈՒՐԺ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1891 թւականի համար կը բացւի հետեւեալ № 11-երորդ համարը լուս տեսնելու օրից: Այդ համարի հետ մենք կ'ուղարկենք մեր բաժանորդներին նաև բաժանորդագրութեան սովորական ծրարները:

Պարոն Պելրժ ՊԻՕՇԵԱՆՏԻ «Բղղէի» լուս տեսնելու առիթով, խմբագրութիւնս ստացաւ Ալեքսանդրապոլից մի արձաթեալ ոսկեղծած թանաքաման հեղինակին լանձնելու համար: Թանաքամանը, որ կրում է փորագրութիւններ Բղղէի և հեղինակի 30-ամեայ գրական գործունէութեան լիշատակին նւիրած, գրած է մի պտտչաճաւոր տուփի մէջ հեղինակի փոքրագիր լուսանկար պատկերով զարդարած:

«ԽԱԹ-ՍԱՐԱ» պատկերը պ. Փափաղեանցի, որ վերջանում է ներկալ համարում, այս ամսւալ ընթացքում լուս կը տեսնի նաև առանձին գրքով:

ԾԱՂԻԿ, լրագիր ազգային, քաղաքական և գրական, հրատարակւում է Կ. Պոլսում, շաբաթ օրերը: Բաժանորդագին տարեկան 45 դրուշ, Ռուսիայի համար 5 ռուբլի, ուրիշ երկիրների համար 12 ֆրանկ, Տնօրէն-հրատարակիչ Յովհան Գ. Փալագաչեան. Հասցէ՝ Պոլիս, Էսկի-Չապթիէ, Պէրպէրեան ապարան:

Շնորհակալութեամբ ընդունելով լիշալ թերթի առաջին համարը, պարտք ենք համարում չալտենել, որ այդ առաջին

համարը մեզ վերադ ոչինչ նպաստաւոր տպաւորութիւն չարաւ, չը նալած որ խմբագրութիւնը ծանուցանում է, որ ասիրա-լոժար չընդապատած են զմեզ մեր սրտակիցք, և իրանց պատ-ւաբեր գործակցութիւնը մեզ նւիրած են ազգին ամենէն տաղանդաւոր և հոգեկապ դրագէտք, չորոց ոմանք կ'երևին այս առաջին թւոյն մէջ իսկ»:

Թերթը գնում է իրան իբր նպատակ՝ ժողովուրդը դար-գացնել՝ միշտ ճշմարտութեան ուղիղ ճանապարհին վերադ ա-ռաջնորդելով զայն:

Մենք այդ առաջին Ռ-ում մի նմուշ ենք դտնում, թէ արգեօք ինչպէս է «Մաղիկը» հասկանում ճշմարտութեան ճա-նապարհը:

Մի ազգային նմուշ մենք դտնում ենք քաղաքական տւ-սութեան մէջ, ուր բոլորովին լրջօրէն խմբագրութիւնը լուծում է այս խնդիրը թէ որ տէրութիւններն են կոչւած այն վտանդի դէմ առնելու, որ ներկայացնում է լիւրդական իւր միշտ աճող զօրքերով: Դնում ենք ալտեղ այդ կտորը. «Լիւրդակալ սպառ-նացող այս անաւոր վտանգը հեռացնելու համար կը մնան միայն երեք տէրութիւններ. Սամանեան պետութիւն, Անգլիա և (գէ լսեցէք!) Սպանիա: Այս վերջինը իւր ներքին կտրու-րագուն գործերով զբաղեալ և քոլերալէն անհաբեկեալ, չէ կա-րող միջազգային քաղաքականութեան մէջ ազդեցիկ դեր մը կատարել: Անգլիան ինչ ինչ մասնաւոր կապակցութիւններ ու-նենալով տէրութեանց ոմանց հետ, չէ ախչափ անկողնիակալ և անշահախնդիր որչափ որ հարկէ տէրութեանց մէջ հաշտարարի դեր կատարելու և անոնց հակընդդէմ շահերը հաշտեցնելու կարող լինելու համար:

«Կախերական (Օսմանեան) կառավարութիւնը կը մնալ ուրեմն այն միակ տէրութիւնը, որ, շնորհիւ իւր կատարեալ անշահախնդրութեան և ծանօթ խաղաղասիրութեան, կարենալ լուեցնել (երեւի ուղում է ասել լսեցնել) արդարութեան և իրաւանց ձայնը և ազդու կերպիւ նպաստել խաղաղութեան պահպանման:

«Եւրոպան արդէն երախտապարտ է այս մասին մեր Օգոս-տափառ և իմաստուն կախեր, որոյ ջանից և զոհողութեանց շնորհիւ կը վալելէ ցալժմ խաղաղութեան բարիքները»:

Իացատրութիւններ աւելորդ են: